

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝ - ՄԻՋԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Կատարող՝ Հայկանուշ Թումոյան

Առարկա՝ Կենսաբանություն

**Ուսումնական հաստատություն՝ Կոտայքի մարզի Ջրառատի
միջնակարգ դպրոց**

ՀՐԱՉԴԱՆ 2023

Բովանդակություն

1. Ներածություն
2. Հետազոտության նպատակը
3. Հետազոտության խնդիրները
4. Թեմայի արդիականությունը
5. Ուսուցչի դերը սովորողի ճանաչողական և ստեղծագործական միտքը զարգացնելու գործընթացում
6. Սովորողի արժեհամակարգի ձևավորման հիմնական գործոնները
7. Գիտական աշխարհայացքի ձևավորումը և զարգացումը դեռահասության շրջանում
8. Միջառարկայական կապերի աշխարհայացքային ֆունկցիաները
9. Միջառարկայական կապերը որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց
10. Միջառարկայական կապերի դերը սովորողների աշխարհայացքի ձևավորման գործընթացում
11. Իմ անձնական փորձից
12. Եզրակացություն
13. Գրականության ցանկ

21-րդ դարի կրթական համակարգը պահանջում է ապահովել կյանքի սերտ կապը ժամանակի մարտահրավերների և գիտատեխնիկական առաջընթացի հետ: Չանրակրթական դպրոցում դասավանդվող առարկաների ուսումնասիրման ընթացքում միջառարկայական կապերի կիրառման անհրաժեշտությունը գործնական մանկավարժության դժվար խնդիրներից մեկն է: Այդ գործընթացի հաջողությունները մեծապես կախված են կրթության բովանդակությունից, որի վերանայումը և համապատասխանեցումը զարգացման առաջնահերթ խնդիր է: Չանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան այսօր մեծանում է առարկաների միջև կապերի բացահայտումը, դերն ու նշանակությունը: Միջառարկայական կապ ստեղծելու շնորհիվ դասի ընթացքում ուսուցիչը երեխաների մոտ զարգացնում է ճանաչողական ակտիվությունը. աշակերտները սովորում են կատարել քննարկումներ, վարել հարցազրույցներ, պնդել իրենց տեսակետը, փաստարկներ բերել: Աշակերտը կատարում է վերլուծություն, բացահայտում պատճառահետևանքային կապերը, ընդլայնում իր աշխարհայացքը, զարգացնելով տրամաբանական մտածողություն: Միջառարկայական կապն հանդիսանում է ժամանակի կրթության կարևորագույն բաղադրիչը: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը: Միջառարկայական կապերը խթանում են սովորողների դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու կարողությունները: Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացվում են մեթոդաբանական, կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթներով: Միջառարկայական կապերի ստեղծման նպատակներից մեկը դառնում է ձեռք բերած գիտելիքներն ու ընդհանրացումները սեփական գիտելիքների համակարգի մեջ ներառելը, հակադրելը, վերլուծելը և այլ տրամաբանական գործողություններ կատարելը: Սա շատ կարևոր հանգամանք է թեմայի առանցքային հարցերի յուրացման գործընթացում:

Ջետազոտության նպատակը`

Տույց տալ, որ միջառարկայական կապերի ստեղծումը նպաստում է գիտելիքների ձևավորմանն ու համակարգմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, անձի զարգացմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա:

Միջառարկայական կապերի ստեղծման միջոցով աշակերտների մոտ կզարգանան քննադատական և ստեղծագործական կարողությունները, կընդլայնվի նրանց աշխարհայացքը:

Աշակերտները կդրսևորեն ճանաչողական, վերացարկման, մտահանգման, դիտարկման, երևույթների նկատմամբ հետաքրքրություն և քննադատական մոտեցում, կհամագործակցեն ընկերների հետ, կլսեն խոսակցին, կաշխատեն ընդհանուր նյութերով, կզարգացնեն գեղագիտական ճաշակ:

Ջետազոտության խնդիրները

- ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ,ամրապնդել և կիրառել
- ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապեր ստեղծել
- ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով զարգացնել քննադատական և ստեղծագործական կարողություններ:

Թեմայի արդիականությունը.

Այսօր հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան մեծանում է առարկաների միջև կապերի բացահայտումը, դերն ու նշանակությունը: Դրանք ճիշտ և խելացի կազմակերպելու դեպքում կհարստանան և կընդլայնվեն սովորողների գիտելիքները: Ճիշտ միջառարկայական կապ ստեղծելու շնորհիվ դասի ընթացքում ուսուցիչը երեխաների մոտ զարգացնում է ճանաչողական ակտիվությունը, նրանք սովորում են կատարել քննարկումներ, վարել հարցազրույցներ, պնդել իրենց տեսակետը, բերել փաստարկներ: Վերջիններս էլ իրենց հերթին նպաստում են սովորողի աշխարհայացքի ճիշտ ձևավորմանը: Ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների տեխնիկական մտածողությունը, կոնստրուկտորական ունակությունները, տարածական պատկերացումները, ստեղծագործական մտածողությունը և այլն: Դասաժամերի մեծ մասը անհրաժեշտ է կազմակերպել մյուս առարկաների հետ օրգանական կապի մեջ, որը հնարավորություն կտա զարգացնելու սովորողների տարբեր որակները, ընդլայնելու նրանց աշխարհայացքը:

Ուսուցչի դերը սովորողի ճանաչողական և ստեղծագործական միտքը զարգացնելու գործընթացում

Արդի ժամանակաշրջանում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Դասավանդող ուսուցիչները պետք է օգտագործեն իրենց հմտությունները, մասնագիտական իմացությունը, ստեղծագործական միտքը, կարողությունների լայն շրջանակը: Որպեսզի ուսուցիչը կարողանա հասնել ցանկալի արդյունքի, պետք է կիրառի տարբեր մեթոդներ, իսկ ի՞նչ է մեթոդը: Մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին: Սովորողը կատարում է վերլուծություն, բացահայտում պատճառահետևանքային կապերը, զարգացնելով տրամաբանական մտածողությունը: Ուսուցչի տրամաբանական կարողությունների շնորհիվ է կատարվում միջառարկայական կապ ստեղծելը և յուրաքանչյուր ուսուցչի պարտավորությունն է զարգացնել աշակերտի տրամաբանությունը, երևակայությունը և հետաքրքրասիրությունը, ձևավորելով բազմակողմանի զարգացած, լայն մտահորիզոնով, ինտելեկտուալ, էսթետիկ վարքով անհատներ:

Սովորողի արժեհամակարգի ձևավորման հիմնական գործոնները

Անհատականությունը բնութագրվում է անձի մտավոր, կամային, բարոյական, սոցիալական այլ հատկանիշների միասնությամբ, որոնցով էլ տվյալ երեխան տարբերվում է մյուսներից: Անշուշտ, յուրաքանչյուր երեխա եզակի է և անկրկնելի, իր անհատականությամբ՝ բացառիկ, և համարվում է հասարակության համար բարձրագույն արժեք: Անձի անհատականությունն արտահայտվում է նրա անհատական ինքնատիպությամբ, զգայությունների յուրահատկությունների, ընկալման, մտածողության, հիշողության, երևակայության, հետաքրքրության, հակումների, ընդունակությունների, խառնվածքի, բնավորության զանազանությամբ: Երեխայի անձի ձևավորման ու դաստիարակության գործում նշանակալից և առաջնային դեր է կատարում ընտանիքը, սակայն դպրոց ընդունվելուն պես այդ պատասխանատվությունը հավասարապես սկսում են կիսել մանկավարժները, որոնք սովորողի հետ անցկացնում են նրա օրվա մեծ մասը: Համաձայն Ա.Ադլերի, իդեալական դպրոցը պետք է միջնորդի դեր կատարի երեխայի ընտանիքի և կյանքի միջև, պետք է լինի այնպիսի վայր, որտեղ երեխան ձեռք է բերում ոչ միայն գիտելիքներ: Դպրոցը պատասխանատու է սովորողի ներդաշնակ զարգացման և հասարակական բարդ հարաբերությունների մեջ նրա հարմարվողականության համար: Դպրոցական դաստիարակությունը մեծապես նպաստում է մարդու ապագա կյանքի մոդելի ձևավորմանը:

Գիտական աշխարհայացքի ձևավորումը և զարգացումը դեռահասուության շրջանում

Աշխարհայացքը կյանքի, բնության և հասարակության մասին ունեցած հայացքների ամբողջությունն է: Աշխարհայացքի մեջ բացառիկ տեղ ունեն բազմաբնույթ գիտելիքները, որոնք մարդկանց մեջ ձևավորում են սեփական դիրքորոշումներ աշխարհի նկատմամբ: Իրենց կայուն համոզմունքների շնորհիվ մարդիկ ձեռք են բերում սեփական սկզբունքների և հայացքների նկատմամբ մեծ վստահություն և նպատակին հասնելու հաստատակամություն:

Ուսումնասիրելով գիտությունների հիմունքների համակարգված դասընթացը, դեռահասները կատարում են ռեալ իրականության, առարկաների ու երևույթների ավելի խոր վերլուծություն, նրանց մեջ գտնում նմանություն և տարբերություն, փոխադարձ կապի ու պատճառակցական պայմանավորվածության գծեր, սահմանում հասարակական-պատմական պրոցեսի օրինաչափություններն ու շարժիչ ուժերը, հանգում ինքնուրույն աշխարհայացքային եզրակացությունների: Դեռահասության տարիքի հրատապ պահանջմունքը ինքնահաստատման ձգտումն է: Այդ պահանջմունքի բավարարումն ընդարձակում է դեռահասի հաղորդակցման շրջանը, խթանում հասարակական-քաղաքական, բարոյական ու գեղագիտական իդեալների ձևավորումը: Պատանեկության տարիքում դպրոցականները հասնում են ֆիզիկական ու հոգևոր հասունության, որը որոշում է նրանց պատրաստակամությունը գիտական աշխարհայացքի՝ իր ամբողջ ծավալով ու խորությամբ յուրացմանը: Մտածողության փիլիսոփայական ուղղվածությունը, իրականության նկատմամբ իմացական պահանջմունքը բարձր դասարանցիների

մեջ ամուր հիմք են ստեղծում ֆունդամետալ մեթոդաբանական գաղափարների, կայուն հայացքների ու համոզմունքների ձևավորման համար, որոնք ապահովում են աշխարհում կողմնորոշվելու ընդարձակությունը, գործունեության ու վարքի սկզբունքները: Է. Ի. Մոնոսզոնի կարծիքով աշխարհայացքի ձևավորվածության մակարդակի գնահատումը պետք է ներառի հետևյալ հիմնական բնութագրերը.

1. Կարևորագույն հասկացությունների, օրենքների, գիտության տեսությունների օպտիմալ յուրացումը, որոնք վճռորոշ նշանակություն ունեն բնության, հասարակության ու մտածողության զարգացման պրոցեսների էությունը հասկանալու համար,

2 .Ուսումնասիրվող նյութի, նրա աշխարհայացքային բովանդակության նկատմամբ կայուն, գիտակցված անձնային վերաբերմունք:

7

Միջառարկայական կապերի աշխարհայացքային ֆունկցիաները

Աշակերտների մեջ գիտական աշխարհայացքի ձևավորման պրոցեսն ապահովող միջոցների ամբողջության մեջ կարևոր դերը պատկանում է ուսուցման պրոցեսում ուսումնական առարկանների միջև փոխադարձ կապերի հաստատմանը: Արտացոլելով գիտական գիտելիքների ու իմացության դիալեկտիկական բնույթը, միջառարկայական կապերն ապահովում են դրա կազմակերպման առանձին կողմերի պահպանումը ամբողջի, որպես համակարգի փոփոխության, այսինքն, նրա մի վիճակից մյուսին անցման դեպքում: Միջառարկայական կապերի իրագործումը հնարավորություն է տալիս միևնույն երևույթը տեսնել տարբեր տեսակետներից, նրա մասին ստանալ ամբողջական պատկերացում:

Վերլուծական- համադրական գործունեության ցանկացած արդյունքի մեջ պարունակվում են թե գիտելիքը և թե գործունեության եղանակը: Դրանք իմացության միասնական պրոցեսի տարբեր կողմեր են, բայց այդ պրոցեսում առաջատար դերը պատկանում է գիտելիքներին: Գիտական գիտելիքի կառուցվածքում առանձնացվում է երկու մակարդակ՝ Էմպիրիկ և տեսական: Էմպիրիկ գիտելիքը հատվածային է, միակողմանի, ոչ լրիվ: Տեսական գիտելիքը

իրականության իմացության բարձրագույն արդյունքն է: Աշխարհայացքային համոզմունքները ինչ որ բան չեն , այլ անձի ներքին դիրքորոշմանն անցած գիտելիքներ են: Ինտելեկտուալի և հուզական-կամայինի հետ միասին աշխարհայացքի կազմի մեջ մտնում է գործուն-պրակտիկ բաղադրիչը:

8

Միջառարկայական կապերը որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց

<<Մանկավարժի աշխատանքը դա ինժեների աշխատանք չէ: Դա ճարտարապետի աշխատանք չէ, գրողի աշխատանք չէ: Դա ամենաբարդ, բայց միաժամանակ ամենապետքական, ամենանհրաժեշտ և սիմբիոզ աշխատանքն է: Դա տքնություն է: Դրա համար էլ մանկավարժներին անվանում են մշակներ: Նրանք մարդ են ձևավորում: Իսկ որպեսզի դաստիարակը կարողանա դաստիարակել, ինքը պետք է դաստիարակված և բարեկիրթ լինի>>:

Կարեն

Դեմիրճյան

Գիտության զարգացումը մեզ լայն հնարավորություն է ընձեռում հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել

աշակերտների ուշադրությունը: Դասի ժամանակ մի առարկան կապելով մյուս առարկաների հետ դասը ավելի հետաքրքիր և արդյունավետ է դառնում: Մտածողության զարգացումը զգալիորեն խթանվում է, երբ ուսուցումը կազմակերպվում է հուզական մթնոլորտում: Դասի ժամանակ աշխույժ, բարձր տրամադրությունը առաջացնում է հոգեկան ուժերի վերելք, ակտիվ ճանաչողական գործունեություն: Գեղարվեստական զգացմունքները ձուլվելով բնագիտական երևույթների հետ աշակերտին մղում են գաղափարի լրիվ ըմբռնման: Չարմանքը, կասկածն ու հիացմունքը, բնության ուժերի ու օրինաչափությունների ընկալումը և դրանց բանաստեղծական, երաժշտական ու նկարչական անդրադարձները մի մեծ շղթա են կազմում: Այդ զգացմունքները պահպանվում են աշակերտների հիշողության մեջ ու հաջորդող դասերին վերապրելով, վերհիշելով ուժեղացնում են գիտական համոզմունքները: Այս ձևով հնարավոր է դառնում միջառարկայական կապերի հաստատում՝ ամենաանսպասելի դրսևորումներով: Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև՝ խորությունը: Ուսուցիչը, նկատելով աշակերտների դրսևորած ընդունակությունները, պետք է ուղղորդի նրան հասնելու լիարժեքության, ինքնադրսևորման և ինքնաբավարարման, այս ձևով խթանելով մտածողության,

երևակայության, հմտությունների ու կարողությունների զարգացմանը, կամքի ձևավորմանը: Դասը պետք է պլանավորել այնպես, որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի ձևավորման, բնության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի, մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշման հիմք՝ շեշտը դնելով զգացմունքային դաստիարակության վրա: Այսպիսով՝ առարկաների և գիտությունների համագործակցությունը առաջնակարգ նշանակություն է ստանում: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել

ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է. ամեն

ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Հետևաբար ուսուցիչը պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ, այլև որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև հարակից առարկաներից: Միջառարկայական կապը պետք է դառնա միջոց հիմնական նպատակին հասնելու համար: Միջառարկայական կապերի իրագործումը ակտիվացնում է աշակերտների մտածողությունը, զարգացնում նրանց տրամաբանական մտածողությունը, նպաստում ճանաչողական կարողությունների ակտիվացմանը, որի իրագործումը հնարավորություն է ստեղծում կրկնել կամ վերհիշել, կամ ձեռք բերել նոր տեղեկություններ, գիտելիքներ նյութական աշխարհի օրինաչափությունների մասին տարբեր առարկաներից: Միջառարկայական կապեր իրագործվում են և՛ դասի ընթացքում, և՛ արտաժամյա պարապմունքների, էքսկուրսիաների ընթացքում: Նման ձևով ուսուցիչը կենտրոնացնում է համարյա բոլոր առարկաներից ստացած գիտելիքները: Հետևաբար միջառարկայական կապերը ուժեղացնում են բոլոր դիդակտիկական սկզբունքների դերն ուսուցման իրական գործընթացում՝ օգտվելով կրթության հաջորդականության սկզբունքից:

Միջառարկայական կապերի դերը սովորողների աշխարհայացքի ձևավորման գործընթացում

Մեր ժամանակների կարևորագույն առանձնահատկություններից է տարբեր գիտությունների գաղափարների և մեթոդների ինտեգրումը: Տնտեսական, էկոլոգիական, սոցիալական պրոբլեմները լուծելու համար անհրաժեշտ է ինտեգրացիոն համակարգային մոտեցում: Ներկայումս կան բազմաթիվ հրատապ

խնդիրներ, որոնք կապված են հասարակության և տարբեր բնագավառների հարաբերությունների հետ:Նրանց միջև գոյություն ունեցող կապերը վերլուծելիս խաչասերվում են պատմությունը ֆիզիկայի, քիմիան՝ կենսաբանության,մաթեմատիկան գրականությանը հետ և այլն: Միասնական գիտական աշխարհայացքի համար անհրաժեշտ է հաշվի առնել միջառարկայական կապերը:Կրթական գործընթացը պետք է կառուցել այնպես, որ այն նպաստի երեխաների մտածողության զարգացմանը, անհրաժեշտ գիտելիքների որոնմանն ու կիրառմանը՝ բացի այդ, այն ուղղորդելու է սովորողներին՝ օգտագործելու սեփական ստեղծագործական հնարավորությունները և ձևավորելու հետազոտական կարողությունները, որն իրականացվում է միջառարկայական մոտեցման միջոցով: Միջառարկայական կապն ապահովում է աշխարհի մասին ամբողջական գիտելիքներ, և մարդու՝ գործնական խնդիրներ լուծելիս համակարգված մտածելու կարողություն, պայմանների ստեղծում սովորողների շրջանում անհատականության բազմաչափ պատկերի ձևավորման և այս աշխարհում ինքն իրեն ընկալելու համար:

Կենսաբանության ուսուցումը բնագիտական մյուս դասընթացների հետ միասին պետք է ապահովի աշակերտների անձնային, սոցիալական, մտավոր և հաղորդակցական զարգացումը, ձևավորի ունիվերսալ ուսումնական գործողություններ, մտավոր ընկալման և արտաքին տեղեկատվության վերամշակման ունակություն: Կենսաբանության դասավանդումը դպրոցում նպատակաուղղված է բնության և կյանքի ճանաչությամբ համակողմանի զարգացած անձի դաստիարակությանը, ով կարժևորի բնապահպանական և առողջապահական միջոցառումներն ու կմասնակցի դրանց ձևավորմանը և իրականացմանը:

Կառուցողական մեթոդներով աշխատելիս, խուսափելով միօրինականությունից՝ ես հաճախ կենսաբանության ժամերին օգտագործում է միջառարկայական կապը՝ խրախուսելով աշակերտների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը, նրանց մտածողությունն ուղղորդելով դեպի նյութի դասակարգումը, վերլուծությունը, կանխատեսումը, հիմնավորումը: Տարիներ շարունակ դասավանդում եմ և՛ կենսաբանություն, և՛ քիմիա առարկաները: Եվ, բնականաբար, իմ դասերի ընթացքում հաճախ եմ անդրադառնում այս երկու առարկաների միջառարկայական կապերի դրսևորմանը: Անմասն չեն մնում նաև մյուս բնագիտական առարկաները: Աշակերտների մոտ մոտիվացիայի, հետաքրքրության հզոր խթան է դառնում մտագրոհի մեթոդով տվյալ առարկայի դասին մյուս հարակից առարկայից որևէ առնչվող թեմայից հարցադրումը: Օրինակը կբերեմ 9-րդ դասարանի կենսաբանության դասընթացից՝ «Բջջի անօրգանական նյութերը» թեման: Շատ հետաքրքիր է դառնում վերհիշել 8-րդ դասարանում անցած «Ձուր: Ձրի հատկությունները» թեման: Հարցադրումները հետևյալն են. «Ապա, ասեք տեսնենք, ի՞նչ հատկություններ ունի ջուրը: Որո՞նք են նրա «զարմանահրաշ» հատկությունները: Պատասխանը լսելուց և քննարկելուց հետո վերսկսում ենք ներկայացնել բջջում ջրի դերը՝ կապված նրա մոլեկուլի բևեռային՝ դիպոլ հատկությունների, ջրածնային կապերի առկայության հետ, որի շնորհիվ ջուրը դառնում է գերազանց լուծիչ բջջում նյութափոխանակությանը մասնակցող բազմաթիվ բևեռային բնույթի նյութերի համար: Քննարկվում են նաև բջջում ընթացող հիդրոլիզի ռեակցիաները, դրանց բնույթը, վերլուծում ենք հիդրոլիզ բառի արմատները և դրանց իմաստը: Գնահատելի է նաև այն հանգամանքը, որ աշակերտները վերհիշում են քիմիա

առարկայից անցած գիտելիքները, դրանք կապելով այսօրվա ստացած նոր գիտելիքների հետ:

12

Կարող եմ բերել նմանատիպ բազմաթիվ օրինակներ: Բջջի քիմիական կազմը անցնելիս վերհիշում եմք քիմիական տարրերը, դրանց առաջացրած իոնները, այդ իոնների դերը բջջի

Նյութափոխանակությունն ապահովելու գործում: Նույնը արվում է բջջի օրգանական նյութերը դիտարկելիս, երբ քննարկվում է դրանց քիմիական կազմը: Երեխաները, գրելով դրանց բանաձևային տեսքը, անմիջականորեն առնչվում են քիմիայից իրենց ունեցած գիտելիքների հետ, քննարկում օրգանական նյութերում կովալենտային և ջրածնային կապերը, իզոմերիայի երևույթը, որն ապահովում է օրգանական միացությունների հսկայական բազմազանությունը: 7-րդ դասարանում կենսաբանության առաջին թեմաներից մեկը կենդանի նյութի կազմավորման մակարդակներն են. ասվում է, որ բջիջը կենդանի նյութի կառուցվածքային և գործառական միավորն է: Նաև շեշտվում է, որ բջիջը կազմված է մոլեկուլներից: Չարց է տրվում աշակերտներին. ի՞նչ է մոլեկուլը: Անդրադարձ է կատարվում քիմիայից ունեցած գիտելիքներին, պարզբանվում մոլեկուլ եզրույթը: Երեխաների մոտ ընդհանուր գաղափար է ստեղծվում այն մասին, որ կենդանի նյութը, ինչպես և անկենդանը, կազմված են մոլեկուլներից:

Ավելի ցայտուն է արտահայտվում կենսաբանություն- քիմիա կապը 11-րդ դասարանում <<Օրգանական քիմիա>> առարկայի ուսումնասիրման ժամանակ, երբ բացահայտվում են կենսաապոլիմերների կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց կենսաբանական նշանակությունը բջջում: Այստեղ մի փոքր հակառակ կողմից մոտենամ հարցին :Դեռևս 9-րդ դասարանում կենսաբանությունից ուսումնասիրած սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր թեմաներից մտապահած գիտելիքներին ավելանում են այդ կարևոր օրգանական նյութերի մոլեկուլների կառուցվածքի, ստացման և կիրառության վերաբերյալ գիտելիքները: Կրկնելով անցածը և դրան ավելացնելով հարակից առարկայի տեսանկյունից նոր գիտելիքները, հնարավոր է դառնում երեխաների մոտ ձևավորել համակարգված մտածելու կարողություն: Իսկ դա , կարծում եմ, ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու կարևոր մեխանիզմ է:

Եզրակացություն

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր պետության համար կրթության զարգացումը տնտեսության առաջընթացի արդյունավետ քաղաքականության մշակման և իրագործման հիմնական երաշխիքն է: Այդ է պատճառը, որ կրթական բարեփոխումները միտված են ինչպես կրթության որակի, այնպես էլ ուսուցման արդյունավետության բարձրացմանը, ինչին հասնելու ուղիներից մեկն ուսումնական դասընթացում միջառարկայական կապերի անմիջական կիրառումն է: Իսկ գիտական տարբեր ճյուղերի հիմունքներին ծանոթանալը և դրանց միջոցով մարդու աշխարհայացքի ու մտահորիզոնի ընդլայնումը սկսվում է հենց դպրոցից: Ուստի, նախ և առաջ դպրոցում, ուսումնական ծրագրերը պետք է կազմված լինեն այնպես, որ ուսումնական գործընթացում սովորողները մշտապես գտնվեն միջառարկայական կապերի գործածության կենտրոնում, մինևույն երևույթներին և խնդիրներին ծանոթանան տարբեր ուսումնական առարկաների տեսանկյունից, բազմակողմանիորեն և տարբեր մեկնաբանություններով: Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք և ելակետ են : Յետևաբար, երեխաներին շրջապատի աշխարհի մասին հնարավորինս բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունի երեխաների աշխարհաճանաչողության համար: Այսպիսի դասավանդման տեխնիկան նպաստում է աշակերտների տարբեր հմտությունների, կարողությունների

ընդլայմանն ու ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Չարգացնում է բազմաբնույթ մտածողությունը և ճիշտ գործելու, սովորելու ունակությունները: Միջառարկայական կապերի շնորհիվ առավել մատչելի ու դյուրին է դառնում նոր նյութը: Դրանց իրագործման հաջողությունն ապահովող կարևոր հանգամանք է նաև ուսուցչի՝ դասին մանրակրկիտ պատրաստվելը: Գործադրվող մեթոդները պետք է նպաստեն ինքնակրթության կարողությունների ձևավորմանը: Ուսումնական մեթոդների համակարգում պետք է հստակորեն արտացոլվի ուսուցչի և աշակերտների գործունեության փոխադարձ կապը:

14

Օգտագործված գրականության ցանկ

1. Համացանց <https://forum.armedu.am/>
2. Համացանց <https://hasmiktopchyan.wordpress.com/>
7. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. <<Մանկավարժություն>>
- 3 Կրուպսկայա, Ուսուցչի մասին, Երևան -1960, էջ 185:
4. Սահակյան Կ. Գ. Ուսանողների գիտական աշխարհայացքի զարգացման հարցը արդի պայմաններում, 2005:

